ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 88 - Ա

19 փետրվարի 2021 թ.

ԺԱՍՄԵՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Ժասմենա Վարդանյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները կատարող Ժասմենա Վարդանյանին տրամադրել 2021 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 2021 թվականի փետրվարի 23-ից մարտի 23-ը ներառյալ:

2. Ժասմենա Վարդանյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության բժիշկ Գագիկ Մկրտչյանին:

19.02.2021

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ